

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՅԵՐԶԱՆԻԿ
ՄԱՆՈՒԿՆԵՐ

ՊԵՏՂՈՍ

891.995
7-95

2011-05

891.99Լ

Գ-95

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ա.թ.


ՅԵՐՋԱՆԻԿ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Նկարներ
Ս.Ս. Գառայարյանի

ԳՐ

Պ Ե Տ Շ Ր Ա Տ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938

26 MAR 2013



1.

Արագածի մի ծերպին,
 Փայտերի մեջ ահարկու,
 Վորպես հսկա մի արծիվ,
 Ծրվարել ե մի մեծ գյուղ:

Այդ գյուղումն ե ապրում նա,
 Նախկին բատրակ Մուշեղը.—
 Ուներ իննը յերեխա,
 Մեկն ել ծընվեց այս գիշեր:

Միասին են գնում միշտ
 Մանկապարտեզ ու դպրոց:
 Հայրը ուրախ, մայրն անվիշտ՝
 Կյանքի յերկու անմար բոց:

193
39

Նայում ե լուռ հայրն ուրախ,
Իր մանուկին նորածին.
Իսկ մոր սրբաուն գուրգուրանք,
Սեր, խնդություն—ծով անծիր...


Ապրում են հաշտ ու խաղաղ,
Ծրնողները յերջանիկ.—
Արդեն ունեն այդքան վաղ
Իննը տղա, մեկ աղջիկ:

2.

Աղմբում են փողոցում,
Իննը ուրախ մանուկներ,—
Վոր յեկել ե առատ ձյուն,
Ծածկել դուռ ու կառուրներ:

Վազվրգում են դեռ ու դեն,
Ինչպես անխոնջ մեղուններ,
Աչքերը ջինջ—լուսագեղ՝
Մեկ քույր և ութ յեղբայրներ:

Նայում են վեր կարոտով,
Կատարներին ձյունածիր.—
Ամենուր ձյուն—ճերմակ ծով,
Յեկ խնդություն մի անծիր...





— Գալըդ բարի, այ ձրմեռ,
Պարգեվիր մեզ առատ ձյուն.—
Ձեն մըրսում մեր վոտն ու ձեռ,
Ինչքան ել դու լինես ցուրտ...

Կատակում են ու խաղում,
Չարածճիք թխահեր:
Դպրոցից տուն են դառնում
Իննը ուրախ մանուկներ:



Ներս են վազում աղմուկով,
Մեկն յերգում է ու պարում,—
Մեկը վազում իր հոր քով,
Մյուսն իր մորն է համբուրում:

Իսկ Սեդիկը վորպես ծիտ,
Ծըլվըլում է մոր գրկում.
Առած է թուղթ է մատիտ,
Ձյունե մարդ է նկարում:

Յեվ Ասոն ու «գիծ» Սոսը,
Վորսորդներ են քաջ, խիզախ.—
Ման են գալիս, փնտրում վորս,
Ուսած «հրացան» ու «նիզակ»:



Իսկ Մացակն ու Աղասին,
Յեղբայրներ են—յերկվորյակ.—
Լինում են միշտ միասին,
Յեվ պահում են աղունակ:

Խըլրտում է որն ի բուն,
Նոր գյուղական հարկի տակ.—
Կյանքով ուրախ ու խնդուն,
Պիտներական մի ողակ:

Բացվում է դուռը հանկարծ:
Փոստատարն է մտնում ներս.—
Հանձնում է փակ մի ծրրար
Մեր Սեդիկին ժպտերես:

Հայրը տան չեր այդ պահին,
Բայց քիչ հետո տուն դարձավ.
Փակ նամակը բաց արին,
Վորտեղ այսպես եր գրված.

«Վորպես քաղաք Բնականց կայր,
Հեկե՛ք շրջանը Բուշանա՛վ.—

Ամեն քարը հրե՛ք կալար.

Արտաբոյանկից ցեղ լծողակ:

Յե՛վ խնդու՛թյուն, յե՛վ բերկրանք,
Վողողեց ա՛յն տունը հին.—
Յերջանկու՛թյուն—ուրախ կյանք,
Խորհրդային մանուկին:

Յերջանկու՛թյան որորան,
Խորհրդային ի՛մ յերկիր.—
Բախտավոր ե հիմա նա,
Ով քո գրկում մեծանա...

1937 թ.



Պատ. խմբ.՝ [redacted]
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Մրբագրիչ՝ Ա. Արզաբանյան

Գլավիտի վարձը՝ Ա.—4022 Հրատ. №4657
Պատվեր 511 Տիրած 4000.
Թուղթ 62×94 Տպագր. 3/4 մամ.
Մեկ մամ. 24480 նշան.
Հանձնված է արտադրության 29 մայիսի, 1938 թ.:
Ստորագրված է տպագրության համար 3 ոգոստոսի, 1938 թ.:

Պետհրատի I տպարան, Յերևան, Հենի 65

« Ազգային գրադարան



NL0399494

608

8024

9566 604.



В. Григорян
СЧАСТЛИВЫЕ ДЕТИ
ГИЗ. АРМ. ССР. ЕРЕВАН